


ՄԻԱՎ-ՈՎ ԱՊՐՈՂ ԱՆՁԱՆՑ ՆԿԱՏՄԱՍԲ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՉԵԿՈՒՅՑ



ԵՐԵՎԱՆ
2023

Մույն զեկույցը մշակվել է «Իրական Աշխարհ, Իրական Մարդիկ» սոցիալական հասարակական կազմակերպության կողմից:

Ջեկույցում ներկայացված են 2023 թվականի հունվարի 1-ից դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում Հայաստանում ՄԻԱՎ-ով ապրող անձանց նկատմամբ արձանագրված խտրականության և իրավախախտումների դեպքերը:

Արձանագրված խնդիրների կապակցությամբ ներկայացվում են առաջարկներ, որոնց իրագործմամբ հնարավոր կդառնա նվազեցնել ՄԻԱՎ-ով ապրող անձանց նկատմամբ առկա համակարգային և ոլորտային խտրականության դրսևորումները:

Չի թույլատրվում օգտագործել, թարգմանել և տարածել զեկույցն առանց համապատասխան հղումների:

«Իրական Աշխարհ, Իրական Մարդիկ» ՍՀԿ
+374 98 66 33 83 www.realwrp.org

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ՄԻԱՎ-ը երկարատև ընթացքով քրոնիկ վարակային հիվանդություն է, որի հարուցիչը մարդու իմունային անբավարարության վիրուսն է (ՄԻԱՎ): Այն, ներթափանցելով օրգանիզմ, ախտահարում է իմունային համակարգը և հանգեցնում իմունային անբավարարության զարգացման: Առաջին անգամ որպես հիվանդություն՝ ՄԻԱՎ-ն արձանագրվել է 1981 թվականին Ամերիկայի Միացյալ Նահանգներում¹:

Ձեռքբերովի իմունային անբավարարության համախտանիշը (ՁԻԱՀ), որը ՄԻԱՎ վարակի վերջնային փուլն է, բնորոշվում է իմունային համակարգի գործունեության խաթարմամբ, որի հետևանքով օրգանիզմը դառնում է անպաշտպան զանազան վարակիչ և ուռուցքային հիվանդությունների նկատմամբ:

ՄԻԱՎ վարակը պատկանում է ռետրովիրուսների դասին, դրա բուժման համար կիրառվող դեղամիջոցները կոչվում են հակառետրովիրուսային դեղամիջոցներ: Մինչ այժմ գոյություն չունի ՄԻԱՎ վարակի արմատական բուժում, սակայն ՀՌՎ դեղամիջոցների շնորհիվ հնարավոր է դառնում օրգանիզմում ճնշել ՄԻԱՎ վարակը և հասնել վիրուսային անհայտնաբերելի մակարդակի: Այն մինչ այժմ աշխարհում գոյություն ունեցող ամենաարդյունավետ միջոցն է, ինչի շնորհիվ ՄԻԱՎ-ը վտանգավոր ու մահացու հիվանդությունից դարձել է լիովին կառավարելի: Այն ազդեցության տարբեր մեխանիզմներ ունեցող երեք և ավելի ՀՌՎ դեղերի համակցում է, որը ՄԻԱՎ-ով ապրող մարդը պետք է ընդունի ողջ կյանքի ընթացքում: ՀՌՎ դեղամիջոցները 2005 թվականի փետրվարից հասանելի են Հայաստանում՝ դրա ցուցում ունեցող և բուժում ստանալու համաձայնություն հայտնած բոլոր անձանց համար:

2022թ.-ի վերջի դրությամբ ամբողջ աշխարհում շուրջ 39 միլիոն մարդ ապրում է ՄԻԱՎ-ով, որոնցից 37,5 միլիոնը չափահաս, իսկ 1,5 միլիոնն անչափահաս անձինք են: 2021 թվականին ամբողջ աշխարհում շուրջ 630 000 մարդ է մահացել ՁԻԱՀ-ով պայմանավորված հիվանդություններից²:

Արևելյան Եվրոպա և Կենտրոնական Ասիա (ԱԵԿԱ) տարածաշրջանը միակն է աշխարհում, որտեղ շարունակվում է ՄԻԱՎ-ի համաճարակի արագ աճը: Թեև ՄԻԱՎ-ի նկատմամբ հետազոտություններն ու բուժումը լայնորեն հասանելի են տարածաշրջանում, այդուհանդերձ ՄԻԱՎ-ի դեպքերն ու շեն ախտորոշվում: ՁԻԱՀ-ով պայմանավորված մահերը 2021 թվականին 32%-ով ավելացել են 2010 թվականի համեմատ: 2021 թվականին 160 000 նոր մարդ է վարակվել ՄԻԱՎ-ով, ինչը 48%-ով ավելի է, քան 2010թ.-ին³:

¹ <https://www.hiv.gov/hiv-basics/overview/history/hiv-and-aids-timeline/#year-1981>

² https://reliefweb.int/report/world/global-hiv-aids-statistics-fact-sheet-2023?gad_source=1&gclid=CjwKCAiAzJ0tBhALEiwAtwj8tubIVs_WbjCwgm8OZ8r1GTSzdLbhGNSttG6veq6lnOZUoG4LiAww4BoCXUgQAvD_BwE

³ <https://www.facebook.com/UNAIDSECA/photos/a.1418517795064688/3297705557145893>

1988 թվականից մինչև 2023 թվականի հոկտեմբերի 31-ը ներառյալ ՀՀ քաղաքացիների շրջանում գրանցվել է ՄԻԱՎ վարակի 5535 դեպք⁴:

ՄԻԱՎ վարակի տարածման հետևանքով առաջացած ՁԻԱՀ-ի համաճարակի վերաբերյալ իրազեկվածության բարձրացման, ինչպես նաև հարցի կարևորության շեշտադրման նպատակով՝ 1988 թվականին դեկտեմբերի 1-ը հռչակվել է որպես ՁԻԱՀ-ի դեմ պայքարի համաշխարհային օր, որը 1996 թվականին Միավորված ազգերի կազմակերպության (ՄԱԿ) ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի հարցերի համատեղ ծրագրի ստեղծմամբ առավել համատարած միջոցառումներով սկսեց անցկացվել ողջ աշխարհում⁵:

«Առանց խտրականացնող օրենքների չեղարկման, որոնք նպաստում են ՄԻԱՎ-ի համաճարակի զարգացմանը, ԱԵԿԱ երկրները չեն հասնի 2030 թվականին ՁԻԱՀ-ին վերջ դնելու նպատակին», -ասել է Էդմոն Մերֆին* «Զրո խտրականության օրվա» կապակցությամբ:

Հայաստանում ՄԻԱՎ-ով ապրող մարդիկ հաճախ են ենթարկվում ՄԻԱՎ-ի հիմքով խտրականության հասարակական կյանքի տարբեր ոլորտներում, մասնավորապես՝ սոցիալական, առողջապահական, ընտանեկան և այլ ոլորտներում: Խտրականության դրսևորումները պայմանավորված են մի քանի հանգամանքներով. չկա բավարար տեղեկատվություն ՄԻԱՎ-ի, փոխանցման ուղիների, բուժման, հետկոնտակտային կանխարգելման վերաբերյալ և այլն: Առավել խնդրային է մարդու իրավունքների, անձնական տվյալների պաշտպանության վերաբերյալ իրազեկվածության մակարդակը: ՀՀ-ում խտրականության ենթարկված ՄԻԱՎ-ով ապրող մարդու համար չկան պետության հետ հետադարձ կապի պարզ, արագ և արդյունավետ արձագանքման մեխանիզմներ, որի կիրառմամբ անձը կարող է վերականգնել իր ոտնահարված իրավունքները: ՄԻԱՎ-ով ապրող անձանց շրջանում չկա վստահություն պետական ինստիտուտների նկատմամբ, ինչի մասին է վկայում այն հանգամանքը, որ շատ դեպքերում խտրականության ենթարկված անձը չի դիմում իրավապահ համակարգին աջակցության համար: ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց նկատմամբ խտրականությունը հատկապես դրսևորվում է առողջապահական, սոցիալական ապահովության, աշխատանքի ոլորտներում, ինչպես նաև ընտանիքում: Խտրականության նման դեպքերը հանգեցնում են ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց մոտ խարանի, ինքնաքննադատության, սեփական անձի թերագնահատման, հասարակությունից մեկուսացման և երբեմն հոգեբանական խնդիրների, ինչը բացասաբար է անդրադառնում նրանց կյանքի որակի վրա:

Խտրականությունը լրջագույն խոչընդոտ է հանդիսանում ՄԻԱՎ-ի դեպքերի վաղ բացահայտման, ՄԻԱՎ-ով ապրող անձանց բուժման և ՄԻԱՎ-ի հակազդման ծրագրերի արդյունավետ իրագործման համար:

Սույն զեկույցում ամփոփ նկարագրված են խտրականության և իրավախախտման այլ դեպքերը ՄԻԱՎ-ով ապրող անձանց նկատմամբ ՀՀ-ում: Մասնավորապես՝ ներկայացվում են բուժաշխատողների կողմից դրսևորված խտրականության և առողջապահական ծառայությունների մերժման, բժշկական

⁴ <https://ncid.am/statistics/>

⁵ https://data.unaids.org/publications/irc-pub03/una96-2_en.pdf

*ՄԱԿ-ի ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի միացյալ հարցերի ծրագրի Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի տարածաշրջանային գրասենյակի տնօրեն

գաղտնիքի ապօրինի հայտնման, ընտանեկան հարաբերություններում արձանագրված իրավախախտումների դեպքերը: Ձեկույցն ամփոփվում է պետական և համապատասխան մարմիններին ուղղված հակիրճ առաջարկություններով:

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ ԵՎ ՀԱՍԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՄԻԱՎ	Մարդու իմունային անբավարարության վիրուս
ՁԻԱՀ	Ձեռքբերովի իմունային անբավարարության համախտանիշ
ՀՌՎ բուժում	հակառետրովիրուսային բուժում
ԹՆՕ	թմրամիջոցների ներարկային օգտագործող
ԻՀԱԿ	ՀՀ ԱՆ «Ինֆեկցիոն հիվանդությունների ազգային կենտրոն» ՓԲԸ
ՈԻԱԿ	ՀՀ ԱՆ «Վ.Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ
ՄԱԿ	Միավորված ազգերի կազմակերպություն
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
	ՄԱԿ-ի ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի միացյալ հարցերի ծրագիր
ՄԻԵԿ	Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիա
ՄԻԵԴ	Մարդու իրավունքների եվրոպական դատարան
ԲԿ	բժշկական կենտրոն

1. ՄԻԱՎ-ՈՎ ԱՊՐՈՂ ՄԱՐԴԿԱՆՑ ՆԿԱՏՄԱՍԲ ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱԿԱՆԱԽՏՈՒՄՆԵՐԻ ԱՅԼ ԴԵՊՔԵՐԻ ԱՄՓՈՓ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Խտրականության արգելքի սկզբունքի պահպանումը՝ որպես մարդու առողջության պահպանման իրավունքի ապահովման երաշխիք.

Խտրականությունից զերծ լինելու իրավունքը երաշխավորված է ինչպես մարդու իրավունքների պաշտպանության միջազգային փաստաթղթերով, այնպես էլ՝ ՀՀ Սահմանադրությամբ:

Խտրականության արգելքի նորմն ամրագրված է «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայով (Կոնվենցիա), որի 14-րդ հոդվածը սահմանում է. «Յուրաքանչյուր ոք իրավունք ունի օգտվելու Կոնվենցիայում ամրագրված իրավունքներից և ազատություններից՝ անկախ այնպիսի գործոններից, ինչպիսիք են սեռը, մաշկի գույնը, կրոնը, քաղաքական դիրքորոշումները կամ ծագումը»:

Խտրականության արգելքի սկզբունքին անդրադարձել է նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (Եվրոպական դատարան)՝ արձանագրելով, որ «Խտրականությունը էապես նման իրավիճակում գտնվող անձանց նկատմամբ տարբեր վերաբերմունքի դրսևորում է՝ առանց որևէ օբյեկտիվ հիմքերի և որևէ ողջամիտ բացատրության»:

ՀՀ Սահմանադրության 29-րդ հոդվածի համաձայն՝ խտրականությունը, կախված սեռից, ռասայից, մաշկի գույնից, էթնիկ կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային փոքրամասնությանը պատկանելությունից, գույքային վիճակից, ծնունդից, հաշմանդամությունից, տարիքից կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից, արգելվում է:

Խտրականության արգելքը, լինելով սահմանադրական սկզբունք, անկյունաքարային նշանակություն ունի մարդու իրավունքների, և մասնավորապես, առողջության պահպանման իրավունքի լիարժեք և անխոչընդոտ իրացման համար: Խտրականությունը պայմանավորվում է անձի հատկանիշով, որը կոչվում է խտրականության հիմք: ՀՀ Սահմանադրությունն ուղղակիորեն չի նախատեսում առողջական վիճակը խտրականությունից պաշտպանվող հիմքերի մեջ: Այնուամենայնիվ, ներպետական օրենսդրության մեջ խտրականությունից պաշտպանվող հիմքերի ցանկը բաց է. իրավական ակտերը չեն բացառում ուղղակիորեն նախատեսված հիմքերից գատ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներ:

Եվրոպական դատարանը «Կ. Հ.-ն և այլք ընդդեմ Սլովակիայի» գործով կայացված վճռով արձանագրել է. «Առողջությանը և վերարտադրողական իրավունքներին առնչվող տեղեկություններին արդյունավետորեն ծանոթանալու իրավունքը գտնվում է Կոնվենցիայի 8-րդ հոդվածով սահմանված անձնական և ընտանեկան կյանքի շրջանակներում»: Եվրոպական դատարանի տվյալ վճռից հետևում է, որ առողջության իրավունքը և վերջինիս վերաբերող տեղեկությունները ներառված են մարդու անձնական կյանքի շրջանակում:

ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված է նաև խտրականությունից զերծ լինելու իրավունքի պաշտպանությունը առողջապահական համակարգում: Մակայն խտրականության արգելքի պահպանման իրավական պաշտպանության մեխանիզմները մեր երկրում բավարար չափով հստակ ու ամբողջապես կարգավորված չեն: Դրա հետևանքով առաջանում են սահմանադրական հիշյալ իրավանորմի կենսագործման դժվարություններ հասարակական կյանքում:

Այդ մասին են վկայում նաև 2023 թվականի ընթացքում Կազմակերպության կողմից արձանագրված ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց նկատմամբ դրսևորված խտրականության դեպքերը, որոնք հիմնականում կատարվել են առողջապահական համակարգում: Դրանք, մասնավորապես, դրսևորվել են բժշկական հաստատություններում բուժաշխատողների կողմից անհրաժեշտ բժշկական օգնության և սպասարկման ծառայություններ տրամադրելը մերժելով, պացիենտների նկատմամբ տարբերակված մոտեցում ցուցաբերելով, ինչպես նաև բժշկական վիրահատական միջամտության համար լրացուցիչ գումար և (կամ) մյուս մարդկանց հետ անհավասար այլ պայմաններ առաջադրելով:

2023 թվականին Կազմակերպության կողմից արձանագրվել են խտրականությամբ զուգորդված 16 իրավախախտման դեպքեր, որոնք վերաբերել են առողջության և մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքների ռոնահարումներին: Բացահայտվել են ոչ միայն բժշկական հաստատություններում խտրական և անհրաքալից վերաբերմունքի դրսևորման դեպքեր, այլև՝ անձնական տվյալների պաշտպանության ապահովման խնդիրներ, գաղտնիության իրավունքի պահպանման խախտումներ, ինչպես նաև վերաբերել են ամուսնաընտանեկան հարաբերություններին:

2. Բժշկական օգնության և սպասարկման տրամադրման մերժման և բուժհաստատություններում արձանագրված խտրականության դեպքեր.

Առողջության իրավունքը մարդու հիմնարար իրավունքներից է: ՀՀ Սահմանադրության 85-րդ հոդվածով ամրագրված է, որ. «Յուրաքանչյուր ոք, օրենքին համապատասխան, ունի առողջության պահպանման իրավունք»: Իսկ «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքով սահմանված է, որ բուժաշխատողների կողմից պացիենտների նկատմամբ անխտրական և հարգալից վերաբերմունք պետք է ցուցաբերվի: Վերոգրյալ օրենքի 14-րդ և 28-րդ հոդվածներով, համապատասխանաբար, նախատեսված է որպես պացիենտի իրավունք և բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողների պարտականություն: Ընդ որում, նույն օրենքի 31-րդ հոդվածի համաձայն՝ բուժաշխատողները ունեն նաև բժշկական գաղտնիքի պահպանման և չհրապարակման պարտականություն: Ավելին, օրենքով ուղղակիորեն նախատեսված են բժշկական գաղտնիքի հրապարակման դեպքերն՝ առանց պացիենտի կամ նրա օրինական ներկայացուցչի համաձայնությամբ: Իսկ օրենքով ամրագրված է բժշկական գաղտնիք հասկացությունը, ինչը նույն օրենքի 2-րդ հոդվածի համաձայն՝ հանդիսանում է պացիենտի առողջական վիճակի մասին կամ բժշկական օգնություն և սպասարկում ստանալու համար դիմելու կամ ստանալու, ինչպես նաև բժշկական օգնություն և սպասարկում իրականացնելու ընթացքում պարզված տվյալները:

Չնայած ՀՀ գործող օրենսդրությամբ նախատեսված իրավական հիմքերին, բժշկական հաստատությունների և բուժաշխատողների կողմից խախտվել է ՄԻԱՎ-ով ապրող մարդու առողջապահական իրավունքը, որն, ըստ էության, պայմանավորված է բուժաշխատողների և բժշկական սպասարկում իրականացնողների նկատմամբ իրավական ներգործության միջոցների կիրառման, ՀՀ գործող օրենսդրությամբ նախատեսված իրավական պատասխանատվության ենթարկելու գործուն, արդյունավետ մեխանիզմների բացակայությամբ:

Բուժաշխատողների կողմից դրսևորված տարբերակված վերաբերմունքի հետևանքով ՄԻԱՎ-ով ապրող անձինք ենթարկվել են ուղղակի խտրականության: Միջազգային իրավունքում որպես խտրականության տեսակ առանձնացվում է ուղղակի խտրականությունը, երբ անհատը տարբերակված վերաբերմունքի է արժանանում նման իրավիճակում գտնվող այլ անձանց համեմատությամբ, ինչի պատճառը տվյալ անհատի որևէ անձնական, սոցիալական կամ այլ բնույթի հատկանիշն է: Այս պարագայում բուժաշխատողները տեղեկացել են անձի ՄԻԱՎ դրական կարգավիճակի մասին և ուղղակիորեն հրաժարվել են բժշկական ծառայություններ տրամադրել: Իսկ ՄԻԱՎ կարգավիճակի մասին տեղեկությունը հանդիսանում է առողջական վիճակի վերաբերյալ տեղեկություն կամ բժշկական գաղտնիք: Ինչը նշանակում է, որ խախտվել է վերջիններիս առողջության և խտրականությունից զերծ լինելու իրավունքը, քանի որ անձանց առողջական վիճակի պաշտպանված հատկանիշի պատճառով անբարենպաստ իրավիճակում են հայտնվել՝ սահմանափակվել են նրանց առողջապահական ծառայություններից օգտվելու հնարավորությունը և վտանգվել են վերջիններիս կյանքն ու առողջությունը:

Դեպք-1 Շահառուն ունեցել է ստամոքսի հետ կապված առողջական խնդիրներ, որի կապակցությամբ այցելել է տեղամասային պոլիկլինիկա և ուղեգրվել Էրեբունի ԲԿ՝ անհրաժեշտ բժշկական օգնություն ստանալու համար: Անձին ընդունել է նույն հիվանդանոցի բժիշկ Արա Վարդանյանը, որը նշանակել է համապատասխան բժշկական հետազոտություններ՝ պացիենտի առողջական վիճակը պարզելու նպատակով: Այնուհետև, ըստ շահառուի, կարիք է եղել վիրահատական միջամտության և բժիշկը որոշել է, որ վիրահատությունը պետք է իրականացվի հաջորդ օրը: Նույն օրը անձը բժշկին հայտնել է իր ՄԻԱՎ կարգավիճակի մասին, որին բժիշկ Վարդանյանը հայտնել է հետևյալը. **«Ինչի՞ ավելի շուտ չէիր ասում, բա էն երիտասարդ բուժքույրերը, որ արյուն են վերցնում, բա որ վարակվեին»:** Այնուհետև բժիշկը հավելել է. **«Մենք օրական մի քանի վիրահատություն ենք ունենում, քեզ համար գործիքները պետք է առանձնահատուկ մշակվեն»:**

Ըստ շահառուի, բժիշկ Արա Վարդանյանը և ևս երկու բժիշկներ, որոնք նույնպես պետք է պլանավորված վիրահատությանը մասնակցեին, սկսել են վատ վերաբերվել, մեղադրական և նվաստացուցիչ վերաբերմունք դրսևորել վերջինիս նկատմամբ՝ առանց կոնկրետ հիմքեր ներկայացնելու հրաժարվելով վիրահատություն կատարելուց:

Այնուհետև շահառուն դիմել է Կազմակերպությանը՝ օգնության համար, և Կազմակերպության սոցիալական աշխատողի կողմից կապ է հաստատվել բժշկի հետ՝ ստեղծված իրավիճակը պարզաբանելու նպատակով: Կազմակերպության սոցիալական աշխատողի այն հարցին, թե որն է պատճառը, որ չի կատարվում

վիրահատական միջամտությունը Ձեր կողմից, թե արդյո՞ք ՄԻԱՎ-ն է, բժիշկը պատասխանել է հետևյալ կերպ. «Այո՛, հենց ՄԻԱՎ-ի պատճառով էլ չեմ վիրահատելու»: Բժիշկը նաև հավելել է. «Շահառուն պետք է ի սկզբանե տեղեկացնե՞ր իր ՄԻԱՎ դրական կարգավիճակի մասին, ընդ որում, ն՛ ավագ բուժքույրին, ն՛ արյուն վերցնող քույրերին, ն՛ վիրահատությունը կատարող բժիշկներին, քանի որ իր նկատմամբ անհրաժեշտ էր առանձնահատուկ վերաբերմունք ցուցաբերել»: Այնուհետև շարունակել է. «Պացիենտը պետք է նախօրոք տեղեկացնե՞ր նաև նրա համար, որ իր վիրահատությունը ամենավերջինը անե՞ինք՝ բոլորից հետո»:

Շահառուի նկատմամբ խտրականություն դրսևորած բժիշկը, իմանալով, որ շահառուն ցանկանում է ստեղծված իրավիճակի մասին բողոք ներկայացնել ՀՀ առողջապահության նախարարությանը, սկզբում մեղադրել է նրան՝ ասելով. «ՌԻՊՈՒՄ է բողոք գրի, թ՛ղ գրի, զգույշ, ես իրա վրա բողոք չգրեմ, որ ի սկզբանե չի հայտնել կարգավիճակի մասին»: Հետագայում, հասկանալով, որ Շահառուն իսկապես մտադիր է բողոքել, բժշկի դիրքորոշումը փոխվել է, և հայտնել հետևյալը. «Թո՛ղ ԻՀԱԿ-ից համապատասխան թղթերը հավաքի ու գա, կվիրահատենք»:

Դեպք-2 Շահառուն քթի պլաստիկ վիրահատություն կատարելու նպատակով 2023 թվականի հուլիսին այցելել է Երևանում գտնվող նորաբաց բուժհաստատություններից մեկը՝ ռինոպլաստիկա կատարելու նպատակով: Ընդ որում, շահառուն տվյալ բուժհաստատությունում աշխատող բժշկին՝ Ռաֆայել Առուշանովին, ընտրել է վերջինիս կողմից կատարվող վիրահատությունների հետ կապված լուսանկարները համացանցում տեսնելուց և հավանելուց հետո: Շահառուն համապատասխան վիրահատության պլանավորման նպատակով իր մոր հետ միասին այցելել է բուժհաստատություն և մոտեցել բժշկին: Բժշկի հետ զրուցելու ընթացքում անձը նրան հայտնել է իր ՄԻԱՎ դրական կարգավիճակի մասին, որին բժիշկը սկզբնապես ադեկվատ արձագանք է տվել, սակայն զրույցը ավատելուց մոտ 2 ժամ հետո բժիշկը շահառուի մոր բջջային հեռախոսին ուղարկել է հաղորդագրություն, որտեղ նշել է. «Հիմնարկը օրենքով թույլտվություն չունի նման դեպքերի հետ աշխատի ու անձնակազմն էլ նման դեպքերի հետ անփորձա: Ես չեմ կարա կազմակերպեմ էս գործը: Ես սիրով կցանկանայի Ձեզ օգնել, բայց անձնակազմս պատրաստ չի, հիմնարկը 6 ամիս առաջա բացվել, նման դեպքի հետ դեռ չի առնչվել և օրենքների խախտումա տեղի ունենալու: Ձեզ առողջություն եմ մաղթում»:

Շահառուն, տեսնելով իր մոր բջջային հեռախոսին բժշկի կողմից ուղարկված վերը նշված բովանդակությամբ հաղորդագրությունը, կապ է հաստատել Կազմակերպության հետ, ներկայացրել է իր հետ կատարվածը և խնդրել աջակցություն: Կազմակերպության սոցիալական աշխատողի կողմից կապ է հաստատվել բժիշկ Ռաֆայել Առուշանովի հետ՝ դեպքի հանգամանքները և ստեղծված իրավիճակը պարզաբանելու նպատակով: Աշխատակցի այն հարցին, թե որն է վիրահատական միջամտություն կատարելը մերժելու պատճառը, բժիշկը պատասխանել է. «Դա կապրիզ է, քանի որ պլաստիկ վիրահատության կատարումը հրատապություն չի պահանջում, իսկ մենք այդ կապրիզը բավարարելու համար չենք կարող մեր անձնակազմի առողջությունը վտանգի տակ դնել»:

Կազմակերպության սոցիալական աշխատողի զանգի ընթացքում բժիշկը հարցրել է, թե արդյո՞ք շահառուն պատրաստվում է իր կողմից ուղարկված հաղորդագրությանը որևէ ընթացք տալ կամ բողոքել: Այնուհետև հարցրել է, եթե շահառուն որոշի դիմել դատարան, արդյո՞ք Կազմակերպությունը իրեն տեղյակ

կպահի դրա մասին, քանի որ այդ դեպքում ինքը կցանկանա տեղափոխվել այլ աշխատանքի կամ հեռանալ երկրից:

Կազմակերպության սոցիալական աշխատողի կողմից իրականացվել են բացատրական աշխատանքներ խտրականություն դրսևորած բժշկի հետ, մասնավորապես՝ խորհրդատվություն է տրամադրվել ՄԻԱՎ-ի, փոխանցման ուղիների, հետկոնտակտային կանխարգելման և շահառուի՝ որպես պացիենտի, իրավունքների ու բժշկի պարտականությունների մասին:

Խտրականություն դրսևորած բժիշկը դեպքից երկու օր անց հեռախոսազրույց է ունեցել շահառուի մոր հետ և հայտնել, որ ինքը պատրաստ է վիրահատական միջամտության իրականացնել, սակայն լուրջ մտահոգություններ ունի հետվիրահատական ընթացքում հնարավոր առաջացող բարդությունների կապակցությամբ: Այնուհանդերձ, անձը կրկին չի դիմել խտրականություն դրսևորած բժշկին և չի ենթարկվել վիրահատական միջամտության, նաև չի դիմել այլ բուժհաստատություն՝ վախենալով, որ կարող է կրկին խտրականության ենթարկվել:

Դեպք-3 Շահառուն ունեցել է շնչառական խնդիրներ և նրան ցուցվել է կատարել քթի միջնապատի ուղղման վիրահատություն: Այդ նպատակով անձը դիմել է «Աստղիկ» ԲԿ, որտեղ մինչվիրահատական պարտադիր հետազոտությունները անցնելուց հետո, բժշկին հայտնել է իր ՄԻԱՎ դրական կարգավիճակի մասին: Բժիշկը սկզբում, մինչև Շահառուի կարգավիճակի մասին իմանալը, նշել է, որ ամեն ինչ նորմալ է և կարելի է նշանակել վիրահատության օրը, սակայն երբ անձը հայտնել է իր ՄԻԱՎ դրական կարգավիճակի մասին, բժիշկը տարաբնույթ՝ վերջինիս առողջական վիճակի հետ կապված պատճառաբանություններ ներկայացնելով, հրաժարվել է կատարել վիրահատական միջամտությունը: Անձի նկատմամբ ցուցաբերվել է ակնհայտ անհարգալից և վատ վերաբերմունք: Բժիշկը հայտնել է. «Ինչի սկզբից չէիր ասում ՄԻԱՎ կարգավիճակիդ մասին, բա որ անալիզներ վերցնելիս բուժաշխատողները վարակվեին», այնուհետև շարունակել. «Մեր հիվանդանոցում ՄԻԱՎ-ով ապրողների նկատմամբ առանձնահատուկ մոտեցում է ցուցաբերվում, հազնում ենք ձեռնոցներ և բժշկական գործիքները հատուկ ախտահանվում են»:

Կազմակերպության սոցիալական աշխատողի, հավասարը հավասարին խորհրդատուի և իրավաբանի կողմից խտրականության ենթարկված Շահառուի խնդրանքով և համաձայնությամբ այց է կատարվել «Աստղիկ» ԲԿ՝ խտրականություն դրսևորած բուժաշխատողի հետ զրուցելու և կատարվածի մասին պարզաբանում ստանալու նպատակով: Բժիշկը դրսևորել է խտրական վարքագիծ և Կազմակերպության աշխատակիցների հարցերին սպառիչ ու հիմնավոր պատասխաններ չի տվել: Այնուհետև Կազմակերպության աշխատակիցները դիմել են բուժհաստատության տնօրինությանը, որոնց ցուցումով բժիշկը պարտավորվել է տրամադրել գրավոր փաստաթուղթ՝ Շահառուին վիրահատական միջամտության ենթարկելը մերժելու մասով:

Կազմակերպության սոցիալական աշխատողի կողմից սույն խտրականության դեպքի կապակցությամբ իրականացվել են նաև բացատրական աշխատանքներ խտրականություն դրսևորած և ՄԻԱՎ-ի պատճառով վիրահատական միջամտություն չկատարած բժշկի հետ: Մասնավորապես, խորհրդատվություն է տրամադրվել ՄԻԱՎ-ի, փոխանցման ուղիների, հետկոնտակտային կանխարգելման և Շահառուի՝ որպես բուժառու, իրավունքների և բժշկի պարտականությունների մասին, սակայն բժիշկը,

այնուամենայնիվ, չի համաձայնվել կատարել իր պարտականությունը և վիրահատել Շահառուին:

Դեպք-4 Շահառուի նկատմամբ խտրականություն է դրսևորվել Գյումրու ԲԿ-ում: Մասնավորապես, անձը քթի ռինոսյուստիկա կատարելու նպատակով այցելել է նշված բուժհաստատություն՝ վիրաբույժի հետ խորհրդատվություն ունենալու և վիրահատությունը պլանավորելու նպատակով: Վիրաբույժի կողմից անձին տրվել են առողջական վիճակի մասին հարցեր, որից հետո Շահառուն ուղղորդվել է բժշկական հետազոտություններ (անալիզներ) հանձնելու: Բժշկի հետ խորհրդատվության ժամանակ ներկա է գտնվել նաև բուժքույրը և Շահառուն կաշկանդվել է իր ՄԻԱՎ դրական կարգավիճակի մասին բժշկին հայտնել բուժքրոջ ներկայությամբ: Ուստի, դրանով պայմանավորված, անձը փորձել է բժշկի հետ առանձնանալ և դրա համար փորձել է գտնել մտացածին պատճառներ, սակայն բժիշկը, ի պատասխան Շահառուի խնդրանքին, ասել է, որ անձը գնա անալիզներ հանձնելու, որից հետո կգրուցեն: Բժշկական հետազոտությունների արդյունքում բժիշկը իմացել է անձի ՄԻԱՎ դրական կարգավիճակ ունենալու մասին և անմիջապես զանգահարել է Շահառուին ու կանչել հիվանդանոց: Հիվանդանոցում բժիշկը կշտամբել է Շահառուին՝ անընդհատ կրկնելով այն հարցը, թե ինչու Շահառուն նախապես իրեն չի իրազեկել, որ ունի ՄԻԱՎ դրական կարգավիճակ, որին Շահառուն պատասխանել է, որ պատրաստվում էր ասել, սակայն չի հաջողվել: Այնուհետև բժիշկը Շահառուին ասել է հետևյալը. **«Քանի որ ունես ՄԻԱՎ չեմ կարող վիրահատել, ռիսկերը շատ են, կարող են հետվիրահատական բարդություններ առաջանալ, ավելի լավ է գնա Երևան, դիմիր այլ բժշկի»:**

Դեպքի հաջորդ օրը Շահառուն կատարվածի՝ իր նկատմամբ դրսևորված խտրականության մասին, հայտնել է Կազմակերպությանը:

Կազմակերպության աշխատակիցների կողմից Շահառուին տրամադրվել է խորհրդատվություն: Հեռախոսագրույց է տեղի ունեցել խտրականություն դրսևորած բժշկի հետ, որի ընթացքում պարզվել է, որ վերջինս չունի բավարար գիտելիքներ ՄԻԱՎ-ի, դրա փոխանցման ուղիների, հետկոնտակտային և նախակոնտակտային կանխարգելման մասին, որով պայմանավորված նրան տրամադրվել է համապատասխան խորհրդատվություն:

Շահառուն հրաժարվել է իր նկատմամբ դրսևորված խտրականությանը իրավական ընթացք տալ՝ վախենալով, որ դրա մասին կարող են իմանալ համայնքում: Նա նաև վախեցել է, որ ամուսինը կարող էր հաշվեհարդար տեսնել բժշկի հետ, հետևաբար նա խտրականության մասին ամուսնուն ևս չէր տեղեկացրել: Բժշկի միջև՝ անկանխատեսելի հետևանքներով:

Դեպք-5 Շահառուն քթի պլաստիկ վիրահատություն կատարելու նպատակով այցելել է Էրեբունի ԲԿ՝ վիրաբույժ Նառա Վարդապետյանի մոտ: Բժշկուհու հետ զրույցի սկզբում Շահառուն հայտնել է, որ ունի ՄԻԱՎ դրական կարգավիճակ և շաքարային դիաբետ: Բժշկուհին հայտնել է, որ շաքարային դիաբետով պայմանավորված քթի պլաստիկ վիրահատություն կատարելը ռիսկային կարող է լինել և հրաժարվել է կատարել վիրահատությունը: Այնուհետև անձը բժշկուհուն ճշգրտող հարց է տվել, թե արդյո՞ք շաքարային դիաբետով է պայմանավորված վիրահատություն չկատարելը, թե՞ իր ՄԻԱՎ կարգավիճակով, **որը բուժքույրը չի ժխտել, և հայտնել է Շահառուին, որ այցելի Էրեբունի ԲԿ մեկ տարի հետո:**

Մերժում ստանալով Էրեբունի ԲԿ-ում՝ շահառուն այցելել է «Գրիգոր Նարեկացի» ԲԿ՝ վիրաբույժ Հայկ Բախշյանի մոտ: Անձն այստեղ նույնպես բժշկի հետ զրույցի սկզբում հայտնել է իր ՄԻԱՎ դրական կարգավիճակի մասին, որից անմիջապես հետո բժշկի վերաբերմունքը կտրուկ փոխվել է և վերջինս, արհամարհանքով վերաբերվելով Շահառուին, մերժել է վիրահատական միջամտություն կատարելը:

Բուժժառայություն ստանալու մերժումներից հետո Շահառուն, հայտնվելով ծանր հոգեբանական վիճակում, Կազմակերպությանն է դիմել՝ անհրաժեշտ աջակցություն ստանալու համար: Կազմակերպության հետ համագործակցության ժամանակահատվածում անձն այցելել է «Աստղիկ» ԲԿ՝ պլաստիկ վիրաբույժ Արշակ Մնացականյանի մոտ: Վերջինիս նույնպես Շահառուն հայտնել է, որ ունի ՄԻԱՎ դրական կարգավիճակ, ինչպես նաև շաքարային դիաբետ: Բժիշկը թեև սկզբում խուսափողական մոտեցում է ցուցաբերել, սակայն հետագայում կատարել է վիրահատական միջամտությունը:

Կազմակերպության սոցիալական աշխատողի կողմից սույն խտրականության դեպքի կապակցությամբ իրականացվել են բացատրական աշխատանքներ խտրականություն դրսևորած բժիշկների հետ, մասնավորապես՝ տրամադրվել է խորհրդատվություն ՄԻԱՎ-ի, դրա փոխանցման ուղիների վերաբերյալ, ինչպես նաև շեշտադրվել է բուժաշխատողների համար օրենքով նախատեսված պարտականությունների կատարման ապահովումը:

Կազմակերպության սոցիալական աշխատողի ջանքերի արդյունքում «Աստղիկ» ԲԿ-ի վիրաբույժ Արշակ Մնացականյանի հետ ձեռք է բերվել պայմանավորվածություն Շահառուին վիրահատական միջամտության ենթարկելու համար: Անձը հաջողությամբ վիրահատվել է:

Դեպք-6 Շահառուի ՄԻԱՎ կարգավիճակի մասին մերձավորները չգիտեն, ամուսինը կարգավիճակ չունի: Անձն ունեցել է գինեկոլոգիական խնդիրներ, այցելել է «Աստղիկ» ԲԿ և դիմել բժիշկ-գինեկոլոգ Արման Նազինյանին: Պացիենտի մոտ հետազոտությունների արդյունքում հայտնաբերվել է միոմա (էնդոմետրիոզ) և ցուցվել է կատարել վիրահատական միջամտություն: Մինչ վիրահատությունը Շահառուն հանձնել է արյան անալիզ, որի արդյունքում հայտնաբերվել է ՄԻԱՎ դրական կարգավիճակը: Բժիշկ-գինեկոլոգը դրանով պայմանավորված ցուցաբերել է բացասական վերաբերմունք նրա նկկատմամբ՝ հայտնելով հետևյալը. «**ՄԻԱՎ-ի պատճառով չեմ կարող վիրահատել**», ինչպես նաև հավելում է, որ պետք է դիմի այլ բժշկի: Շահառուն հայտնվել է հոգեբանական ծանր վիճակում, քանի որ պատկերացում չի ունեցել ՄԻԱՎ-ի մասին, իսկ բժիշկը չի բացատրել ՄԻԱՎ-ի էությունը: Շահառուն, ունենալով մտավախություն, հրաժարվել է այլևս այցելել որևէ բուժհաստատություն և ստանալ բուժսպասարկում՝ վախենալով, որ կենթարկվի կրկնակի խտրականության:

Կազմակերպության և Շահառուի համատեղ աշխատանքի ընթացքում Շահառուն հայտնել է նշված խտրականության դեպքի մասին, որը տեղի է ունեցել 2021 թվականին: Շահառուն հրաժարվել է նշված խտրականության դեպքին հետագա ընթացք տալ և դիմել իրավասու մարմիններին, քանի որ խտրականություն ցուցաբերած բժիշկը մահացել է: Կազմակերպության սոցիալական աշխատողի և Շահառուի միջև պայմանավորվածություն է ձեռք բերվել հետագայում վիրահատական միջամտության համար բուժհաստատություն դիմելու դեպքում ստանալ աջակցություն Կազմակերպությունից:

Դեպք-7 Շահառուի նկատմամբ խտրականություն է դրսևորվել «Աստղիկ» ԲԿ-ում: Մասնավորապես, անձը լյարդի վիրահատություն կատարելու անհրաժեշտությամբ պայմանավորված, այցելել է տվյալ բուժհաստատություն, որտեղ պարզվել է, որ առկա են որոշակի խոչընդոտներ այլ բուժառուների հետ համահավասար պայմաններում բուժօգնություն ստանալու մասով: Շահառուից, որը հանդիսանում է պետ.պատվերի շրջանակներում անվճար բժշկական օգնություն և սպասարկում ստանալու իրավունքի սուբյեկտ, պահանջվել է վճարել հավելյալ 30.000 դրամ՝ վիրահատության համար բժշկական սավան և այլ մեկանգամյա պարագաներ ձեռք բերելու նպատակով:

Անձը փորձել է պարզել, թե որն է պետ.պատվերի շրջանակից դուրս՝ շահառուից բժշկական օգնության համար լրացուցիչ վճար գանձելու պատճառը, որին վիրաբույժը պատասխանել է, որ այդպիսի ներքին կանոնակարգ է գործում բժշկական կազմակերպությունում:

Ֆինանսական դժվարությունների պատճառով Շահառուն կանգնել է երկրնորանքի առաջ՝ իր առողջության պահպանման և սոցիալական կացության հարցերի միջև:

Շահառուն իր նկատմամբ բուժհաստատությունում դրսևորված խտրականության կապակցությամբ դիմել է Կազմակերպությանը՝ իրեն աջակցություն ցուցաբերելու և դեպքին միջամտելու համար: Կազմակերպության սոցիալական աշխատողի և իրավաբանի կողմից այց է կատարվել «Աստղիկ» ԲԿ՝ Շահառուի նկատմամբ դրսևորված խտրականության հանգամանքները պարզելու նպատակով, որի կապակցությամբ գրույց է տեղի ունեցել Շահառուին ընդունած բժշկի հետ: Բժշկի հետ տեղի ունեցած գրույցի արդյունքում պարզվել է, որ տվյալ բուժհաստատությունում, ըստ բժշկի, գործում է ներքին կանոնակարգ և որոշակի խմբին պատկանող բուժառուների, մասնավորապես՝ Հեպատիտ Բ և Ց ունեցողների, ՄԻԱՎ-ով ապրող անձանձ համար կան վճարումների կատարման տարբերակված մոտեցումներ:

Բժշկի կողմից հայտնած տեղեկատվության իսկությունը պարզելու և կատարվածի բոլոր հանգամանքները պարզելու նպատակով Կազմակերպության նախագահի կողմից համապատասխան հարցում-գրություն է ուղարկվել «Աստղիկ» ԲԿ-ի տնօրենին:

Հավելյալ վճարումներ կատարելու և նշված բուժհաստատությունում վիրահատվելու հարցը մնացել է Շահառուի հայեցողությանը:

Դեպք-8 Շահառուն իր երկրորդ հղիության ընթացքում (5 շաբաթական) այցելել է Գորիսի ԲԿ՝ բժշկուհի Կարինե Յոլյանի մոտ՝ հերթական ստուգման: Տվյալ այցելության ընթացքում, քանի որ բժշկուհին մինչ այդ տեղեկացված չի եղել շահառուի ՄԻԱՎ կարգավիճակի մասին, անձը նպատակահարմար է գտել դրա մասին հայտնել բժշկուհուն, սակայն արդյունքում ենթարկվել է բժշկուհու խտրական վերաբերմունքին: Մասնավորապես, բժշկուհին Շահառուին կշտամբել է՝ տալով հետևյալ հարցերը. «1) որտեղից ես վարակվել, զուգրնկեր ունեցել ես, թե չէ, 2) որ գնացել ես մատնահարդարման, եղունգներդ սարքել ես մատնահարդարին էլ կարողա վարակած լինես, ինչու չես զգուշացրել»: Այնուհետև բժշկուհին հավելել է. «գնա ամուսնուդ հետ զրուցի և հղիությունդ ընդհատի, առողջ երեխա չես կարող ունենալ: Նույնիսկ բուժքրոջը

կարող էս վարակել անալիզներ հանձնելիս»: Կատարվածի արդյունքում Շահառուն հայտնվել է հոգեբանական ծանր վիճակում և դիմել Կազմակերպությանը, որպեսզի ստանա աջակցություն: Կազմակերպության սոցիալական աշխատողը հեռախոսակապ է հաստատել բժշկուհի Կարինե Յոյանի հետ՝ տեղի ունեցածը պարզաբանելու համար: Բժշկուհին նշել է, որ քանի դեռ երեխայի սրտի աշխատանքը չի լավում, ինքը անձին չի կարող հաշվառել: Մակայն, ըստ Շահառուի, իրականությունն այլ է եղել, և բժշկուհին անձի ՄԻԱՎ կարգավիճակի մասին իրազեկվելուց հետո հրաժարվել է վարել հղիությունը և առաջարկել է գնալ Երևան:

Կազմակերպության սոցիալական աշխատողի կողմից պայմանավորվածություն է ձեռք բերվել «Արմենիա» ԲԿ-ի հետ, որպեսզի Շահառուն գնա և հաշվառվի տվյալ հիվանդանոցում: Շահառուն այցելել է «Արմենիա» ԲԿ և հղիության հետագա ընթացքը վարում է տվյալ բուժհաստատությունում:

3. Բժշկական գաղտնիքի ապօրինի հայտնման դեպքեր.

Անձի առողջական վիճակին կամ սեռական կյանքին վերաբերող տեղեկությունները հանդիսանում են հատուկ կատեգորիայի անձնական տվյալներ և ՀՀ օրենսդրությամբ հատուկ պաշտպանության համակարգ ունեն: Դա է վկայում ՀՀ օրենսդրությամբ սահմանված մի շարք և հատուկ կարգավորումները: Նախ և առաջ, պետք է նշել, որ ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված է մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքը, մասնավորապես՝ Սահմանադրության 31-րդ հոդվածն ամրագրում է, որ յուրաքանչյուր ոք ունի իր մասնավոր և ընտանեկան կյանքի, պատվի ու բարի համբավի անձեռնմխելիության իրավունք: Ինչը նշանակում է, որ գաղտնիության իրավունքի պահպանման ապահովումը պետության կարևորագույն պարտականություններից է: Միաժամանակ, պետք է նշել, որ այն լայն հասկացություն է և ներառում է թե գրավոր, թե բանավոր հաղորդակցման միջոցով անձին վերաբերող անձնական, բժշկական, ընտանեկան, առողջական, սոցիալական, բանկային և բազմաթիվ այլ բնագավառներին վերաբերող տեղեկատվության չբացահայտում՝ առանց տվյալ անձի համաձայնության: Այնուամենայնիվ, սահմանադրական տվյալ նորմը նախատեսել է անձի համաձայնության բացակայության դեպքում գաղտնիության իրավունքի սահմանափակման հնարավորություն, սակայն միայն օրենքով ուղղակիորեն նախատեսված բացառիկ դեպքերում:

Համաձայն «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի՝ առանց անձի համաձայնության արգելվում է հատուկ կատեգորիայի անձնական տվյալներ մշակելը, բացառությամբ, երբ տվյալի մշակումն ուղղակիորեն նախատեսված է օրենքով: Իսկ նույն օրենքի 26-րդ հոդվածի 2-րդ մասի՝ այդ տվյալներն առանց անձի համաձայնության կարող են փոխանցվել երրորդ անձի, եթե նրա կյանքի, առողջության կամ ազատության պաշտպանության համար են: «Բնակչության բժշկական օգնության և սպասարման մասին» ՀՀ օրենքի 28-րդ և 31-րդ հոդվածների համաձայն՝ բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողները, բուժաշխատողները պարտավոր են պահպանել բժշկական գաղտնիք պարունակող տեղեկությունները բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի: Իսկ ՀՀ քրեական օրենսգրքի 205-րդ հոդվածով նախատեսված է քրեական պատասխանատվություն

բժշկական գաղտնիք պարունակող տվյալների ապօրինաբար մեկ այլ անձի հայտնելու համար, եթե օրենքով նախատեսված անձնական տվյալներ մշակողի կողմից առանց անձի կամ նրա օրինական ներկայացուցչի գրավոր համաձայնության է իրականացվել:

Առողջության պահպանման իրավունքի հիմնարար տարրերից բժշկական գաղտնիքի պահպանության կարևորությանն անդրադարձել է նաև Եվրոպական դատարանը: Մասնավորապես, Եվրոպական դատարանը նշել է, որ անձնական, այդ թվում՝ բժշկական տվյալների պաշտպանությունն ունի հիմնարար նշանակություն Կոնվենցիայի 8-րդ հոդվածով երաշխավորված՝ անձի անձնական և ընտանեկան կյանքը հարգելու իրավունքի իրացման համար: Անդրադառնալով ՄԻԱՎ-ով ապրող անձանց բժշկական գաղտնիք պարունակող տեղեկատվության բացահայտմանը՝ Եվրոպական դատարանը նշել է, որ մարդու մոտ ՄԻԱՎ վարակի առկայության վերաբերյալ տվյալների բացահայտումը կարող է կտրուկ ազդեցություն ունենալ վերջինիս, ինչպես մասնավոր և ընտանեկան կյանքի, այնպես էլ՝ սոցիալական կյանքի և զբաղվածության վրա՝ ենթարկելով նրան մերժված լինելու վտանգին: Այս հանգամանքն այլ անձանց նույնպես կարող է հետ պահել հետազոտվելու և բուժում ստանալու մտքից՝ այդպիսով վտանգելով հասարակության համար կանխարգելման անվտանգության միջոցառումների պահպանմանն ուղղված ջանքերը:

Այսպիսով, պետությունն ունի պարտավորություն՝ ապահովելու անձի առողջության պահպանման իրավունքի հիմնարար տարրերից՝ բժշկական գաղտնիքի պահպանման իրավունքի լիարժեք իրացումը:

Թեև ՀՀ օրենսդրությամբ ամրագրված է բժշկական գաղտնիք պարունակող տեղեկությունների, այդ թվում՝ անձի ՄԻԱՎ կարգավիճակի վերաբերյալ, պահպանման ուղղակի պարտավորություն և համապատասխան պատասխանատվություն, սակայն Կազմակերպության կողմից արձանագրվել են բազմաթիվ դեպքեր, երբ առանց անձի համաձայնության դրանք ապօրինի հայտնվել են:

Դեպք-9 Շահառուի և վերջինիս նախկին ամուսնու ՄԻԱՎ դրական կարգավիճակ ունենալու մասին գիտեն միայն նրանց ընտանիքների անդամները, իսկ անձի դուստրը չի ունեցել ՄԻԱՎ դրական կարգավիճակ: Շահառուի դստեր բժշկական քարտում, որը բացվել է տեղամասային պոլիկլինիկայում, նշվել է, որ նա «**ՄԻԱՎ վարակակիր է**» իբրև թե պայմանավորված այն հանգամանքով, որ ծնողները ունեն ՄԻԱՎ-ի նկատմամբ դրական կարգավիճակ: Անհրաժեշտ բժշկական միջամտության ենթարկվելու նկատառումներից ելնելով՝ շահառուն դիմել է իր դստեր տեղամասային պոլիկլինիկա և հայտնաբերել, որ դստեր բժշկական քարտում կան բժշկական գաղտնիք պարունակող այնպիսի տեղեկություններ, որոնք առանց իրենց համաձայնության են նշված: Ավելին, տվյալ բժշկական քարտը (անկետան), տեղամասային բժշկի կողմից ուղարկվել է մեկ այլ պոլիկլինիկա՝ պայմանավորված այն հանգամանքով, որ Շահառուի հաշվառման հասցեն փոխվել է: Անձը դիմել է Կազմակերպությանը՝ տեղի ունեցած խտրականության դեպքին արձագանք տալու նպատակով:

Կազմակերպության սոցիալական աշխատողի և իրավաբանի կողմից այց է կատարվել Շենգավիթի մանկական պոլիկլինիկա՝ տեղում բուժաշխատողի հետ զրուցելու և խտրականության դեպքի հանգամանքները պարզելու նպատակով: Աշխատակիցների կողմից տրվել են ՄԻԱՎ-ի, դրա փոխանցման ուղիների, ինչպես նաև վարակի կանխարգելմանը և բուժմանը վերաբերող հարցեր, որոնց բուժաշխատողը

տվել է թերի և չհիմնավորված պատասխաններ: Մասնավորապես, պարզ է դարձել, որ բուժաշխատողը չունի գիտելիքներ ՄԻԱՎ-ի փոխանցման ուղիների մասին, իսկ այն հարցին, թե օրինակ ՄԻԱՎ-ը կորոնավիրուսից փոխանցման առումով ինչով է տարբերվում, կարող է արդյոք փոխանցվել օդակաթիլային եղանակով, բուժաշխատողը տվել է դրական պատասխան և հավելել, որ հենց դրա համար երեխայի բժշկական քարտում նշվել է **«ՄԻԱՎ վարակակիր»:**

Այնուհետև տրվել են հարցեր՝ պարզելու, թե բուժաշխատողը արդյոք ունի բավարար գիտելիքներ բժշկական գաղտնիքի, դրանց պահպանման երաշխիքների և չպահպանման դեպքում նախատեսվող իրավական, ներառյալ՝ քրեական պատասխանատվության մասին: Բուժաշխատողի կողմից տրված պատասխաններից պարզ է դարձել, որ վերջինս չի տիրապետում բժշկական ոլորտը կարգավորող օրենսդրությանը, ինչպես նաև չունի պատկերացում իր պարտականությունների մասին՝ կապված բժշկական ծառայությունների մատուցման հետ:

Դեպք-10 Շահառուի ՄԻԱՎ դրական կարգավիճակի մասին գիտի կինը: Դրանով պայմանավորված ՀՀ ԱՆ ԻՀԱԿ բուժքրոջ կողմից խտրականություն է դրսևորվել Շահառուի կնոջ նկատմամբ հղիության և ծննդաբերության ժամանակահատվածում: Մասնավորապես, ԻՀԱԿ բուժքույրը, որը հանդիսացել է Շահառուի հարևանուհին, ընդունել է նրա կնոջ անալիզները: **ԻՀԱԿ բուժքույրը Շահառուի հարևանության շրջանում տարածել է տեղեկատվություն առ այն, որ անձը, նրա կինը և նորածին երեխան ՄԻԱՎ-ով ապրող մարդիկ են:** Ընդ որում, Շահառուի կինը և երեխան ՄԻԱՎ-ի նկատմամբ չունեն դրական կարգավիճակ: Նշվածով պայմանավորված խախտվել է Շահառուի գաղտնիության իրավունքը:

Կազմակերպության իրավաբանի և սոցիալական աշխատողի աջակցությամբ Շահառուն դիմում է ներկայացրել ՀՀ առողջապահության նախարարին՝ իրավախախտ բուժքրոջ նկատմամբ կատարվածի կապակցությամբ կարգապահական վարույթ հարուցելու և պատասխանատվության ենթարկելու համար:

Դեպք-11 Շահառուն հղիության վարման նպատակով հաշվառվել է Աբովյանի ծննդատանը՝ բժիշկ-գինեկոլոգ Լուսինե Հակոբջանյանի մոտ: Բժշկուհին հղիության վարման ընթացքում ցուցաբերել է ակնհայտ խտրական մոտեցում Շահառուի նկատմամբ՝ հրապարակելով նրա ՄԻԱՎ կարգավիճակ ունենալու մասին բժշկական գաղտնիքը: Մասնավորապես, բժշկուհին Շահառուի բժշկական քարտի վրա **Բ-20** նշագրման փոխարեն կատարել է նշում՝ **«ՄԻԱՎ դրական»:** Բացի այդ, Շահառուի հերթական հետազոտության ժամանակ՝ 2023 թվականի մայիսին, բժշկուհին բուժքույր Մարիամին զգուշացրել է, որ վերջինս տեղյակ պահի անալիզներ ընդունող բուժաշխատողին անձի ՄԻԱՎ դրական կարգավիճակի մասին, որպեսզի, իբրև թե, անալիզներ ընդունող բուժքույրը ցուցաբերի զգուշավորություն: Այնուհետև, բուժքույրը, բժշկուհի Հակոբջանյանի ցուցումի համաձայն, մոտեցել է անալիզների ընդունման հիվանդասենյակ, որտեղ դռան մոտ սպասելիս է եղել նաև Շահառուն: Այդ պահին հիվանդասենյակում ներկա են գտնվել նաև երրորդ անձինք, որտեղ բուժքույրը բարձրաձայնել է. **«Զգույշ կլինես, հիմա մտնող պացիենտը ՄԻԱՎ ունի»:** Կազմակերպության սոցիալական աշխատողի, հավասարը հավասարին խորհրդատուի և իրավաբանի կողմից անձի խնդրանքով և համաձայնությամբ այց է կատարվել Աբովյանի ծննդատուն՝ խտրականություն դրսևորած բուժաշխատողի հետ զրուցելու և կատարվածի մասին պարզաբանում ստանալու նպատակով: Բժիշկը

դրսևորել է խտրական վարքագիծ և Կազմակերպության աշխատակիցների հարցերին սպառիչ ու հիմնավոր պատասխաններ չի տվել: Բժշկուհուն տեղեկացվել է նաև, որ իր վարքագիծն իր մեջ պարունակում է նաև քրեական հանցակազմի տարրեր:

Ինչպես մյուս դեպքերում, այստեղ ևս բժշկին խորհրդատվություն է տրամադրվել ՄԻԱՎ-ի, փոխանցման ուղիների, հետկոնտակտային կանխարգելման և Շահառուի՝ որպես բուժառու, իրավունքների և բժշկի պարտականությունների մասին:

Կազմակերպության աջակցությամբ անձը հաղորդում է ներկայացրել ՀՀ դատախազություն՝ հանցագործության մասին և հարուցվել է քրեական գործ: Վարույթն իրականացնող մարմնի որոշմամբ Շահառուն ճանաչվել է տուժող և քրեական գործի վարույթը ընթացքի մեջ է:

Դեպք-12 Շահառուի նկատմամբ խտրականություն է դրսևորվել ՀՀ ՆԳՆ ոստիկանության կենտրոնականի բաժնում: Մասնավորապես, անձը կեսօրին աշխատանքից վերադառնալու ճանապարհին բերման է ենթարկվել քաղաքացիական համազգեստով անձանց կողմից, որոնք ներկայացել են որպես ոստիկանության աշխատակիցներ: Վերջիններս Շահառուին ենթարկել են անձնական խուզարկության, նրա մոտից հայտնաբերել են ՀՌՎ դեղերը և կարծելով, որ դրանք թմրանյութ պարունակող հաբեր են, անօրինական կերպով բերման են ենթարկել բաժին: Բաժին բերման ենթարկելու ճանապարհին ոստիկանները Շահառուին ենթարկել են նաև անօրինական հարցաքննության՝ փորձելով պարզել անձի սեռական կողմնորոշումը, մասնավորապես՝ հոմոսեքսուալ է, թե ոչ, ինչին Շահառուն տվել է բացասական պատասխան: Հասնելով ոստիկանության բաժին՝ ոստիկանները անձի նկատմամբ դրսևորում են անհարգալից և ծաղրական վերաբերմունք: Շահառուի մոտից հայտնաբերված ՀՌՎ դեղերը ոստիկանները ուղարկել են իրենց ծանոթ փորձագետին, որը բանավոր եզրակացություն է տվել այն մասին, որ այդ դեղահաբերը թմրանյութ պարունակող են: Այնուհետև, տվյալ փաստով նյութերը ոստիկանությունն ուղարկում է դատախազություն՝ քրեական գործ հարուցելու համար: Այդ ընթացքում միաժամանակ միջնորդություն է ներկայացվում Շահառուի նկատմամբ կալանքը՝ որպես խափանման միջոց ընտրելու վերաբերյալ: Տվյալ ժամանակահատվածում անձն անօրինական կերպով պահվում է ոստիկանության բաժնում: Ոստիկանները Շահառուից փորձում են պարզել, թե որտեղից նրան այդ դեղահաբերը, որին անձը ստիպված պատասխանում է՝ ասելով. **«Դրանք Բ-20-ի բուժման համար նախատեսված դեղահաբեր են»:** Լսելով Շահառուի այս պատասխանը՝ ոստիկաններից մեկը ինտերնետի միջոցով պարզում է, որ հայտնաբերված դեղահաբերը, իրոք, Բ-20-ի բուժման համար են և թմրանյութ չեն պարունակում: Սակայն, միաժամանակ, ոստիկանը սկսում է ծաղրել Շահառուին՝ հայտնելով հետևյալը. **«ՄՊԻԴ-ով հիվանդ ես»:** Շահառուի եղբայրը երկար ժամանակ լուր չունենալով եղբորից, զանգահարում է նրան, բերման ենթարկված ոստիկաններից մեկը պատասխանում է հեռախոսին և հարցնում է. **«Տեղյա կ ես, որ եղբայրդ ՄՊԻԴ ունի»:** Շահառուն ՀՌՎ դեղերի թմրանյութ չհանդիսանալու հանգամանքը ապացուցելու համար կապ է հաստատում նաև ՀՀ ԱՆ ԻՀԱԿ համաճարակաբանի հետ՝ գիշերը ժամը 4-ի սահմաններում: Այնուհետև, Շահառուին բերման ենթարկելու հաջորդ օրը ոստիկանության տարածքային բաժնի պետի միջնորդությամբ Շահառուն ազատ է արձակվում ոստիկանության բաժնից:

Դեպքի հաջորդ օրը Շահառուն այցելել է ԻՀԱԿ համաճարակաբանի մոտ, որը վերջինիս ուղղորդել է Կազմակերպություն՝ աջակցություն ստանալու համար:

Շահառուն հրաժարվել է իր նկատմամբ դրսևորված խտրականությանը իրավական ընթացք տալու հեռանկարից, սակայն համաձայնվել է իր բողոքը արտահայտել զանգավածային լրատվության միջոցներով⁶:

Պեպ-13 Շահառուն ենթարկվել է խտրականության Վեդու ԲԿ-ում բժիշկ-թերապևտի կողմից: Մասնավորապես, Շահառուն, ունենալով առողջական լուրջ խնդիրներ, այցելել է իրեն բուժող բժշկին: Բժշկի հետ զրույցի ընթացքում անձը հայտնել է իր ՄԻԱՎ դրական կարգավիճակ ունենալու մասին, որպեսզի բժիշկը դա հաշվի առնի իրեն բուժելու և բուժում նշանակելու տեսանկյունից: Այնուհետև, որոշ ժամանակ անց, Շահառուն տուբերկուլոզի բուժման նպատակով այցելել է ՀՀ ԱՆ թոքաբանության ազգային կենտրոն, որտեղ հոսպիտալացվել է: Տվյալ կենտրոնում գտնվելու ընթացքում Շահառուն իր քրոջ որդուց տեղեկանում է, որ իր ՄԻԱՎ դրական կարգավիճակ ունենալու մասին բժշկական գաղտնիքը տարածվել է համայնքում: Վերջինի հետ կապված անձը դիմել է Կազմակերպությանը՝ աջակցություն ստանալու համար:

Շահառուն իր նկատմամբ դրսևորված խտրականությանը չի ցանկացել հետագա ընթացք հաղորդել՝ ունենալով մտավախություն, որ իր կարգավիճակի մասին տեղեկությունը էլ ավելի տարածում կստանա:

4. Ընտանեկան հարաբերություններում արձանագրված խտրականության դեպքեր.

«Անձնական կյանքը» լայն հասկացություն է. ներառում է անձի ֆիզիկական և հոգեբանական ամբողջությունը: Որոշ դեպքերում այն ընդգրկում է նաև անձի ֆիզիկական և սոցիալական ինքնության ասպեկտները: Եվրոպական դատարանն իր կայացրած որոշումներով ամրագրել է, որ Կոնվենցիայի 8-րդ հոդվածի ուժով պետությունները պարտավորություն են կրում պաշտպանել անհատի ֆիզիկական և բարոյական անձեռնմխելիությունն այլ անձից: Այս դրական պարտավորությունները կարող են ընդգրկել մասնավոր անձանց կողմից կատարվող հնարավոր բռնի գործողությունից պաշտպանություն ապահովող համապատասխան իրավական դաշտ ստեղծելու և գործնականում կիրառելու պարտականություն: Այս պարագայում կարևոր է նշել ընտանեկան հարաբերություններում ՄԻԱՎ-ով ապրող անձանց ֆիզիկական և հոգեբանական ամբողջականության և պաշտպանության ապահովումը: Սակայն բազմաթիվ ՄԻԱՎ-ով ապրող մարդիկ մասնավոր և ընտանեկան հարաբերություններում ենթարկվում են խտրականության, ֆիզիկական կամ տնտեսական բռնության, հոգեբանական ճնշումների՝ պայմանավորված հասարակության մեջ նրանց նկատմամբ առկա խտրական և կարծրատիպային պատկերացումներով: Նման պայմաններում ՄԻԱՎ-ով ապրող անձանց համար ՀՀ օրենսդրությամբ մարդու իրավունքների արդյունավետ պաշտպանության մեխանիզմներ ու բավարար երաշխիքներ նախատեսված չեն: Ավելին, երբ խախտվում է վերջիններիս գաղտնիության իրավունքը, առկա է վտանգ, որ, օրինակ, ոստիկանության աշխատակիցները կարող են ապօրինի տարածել անձի ՄԻԱՎ կարգավիճակի վերաբերյալ տեղեկությունները և հայտնի դարձնել երրորդ անձանց: Ինչի պատճառով իրավունքները ոտնահարված շատ մարդիկ խուսափում են դիմել իրավապահ մարմիններին:

⁶ <https://www.facebook.com/azatutyun/videos/272883938612773>

Դեպք-14 Շահառուն, բնակվելով ամուսնու ծնողների հետ, խտրականության է ենթարկվում սկեսուրի կողմից՝ իր կարգավիճակով պայմանավորված: Մասնավորապես, սկեսուրը անընդհատ կշտամբում է Շահառուին՝ նրան անհիմն մեղադրելով ամուսնական դավաճանության մեջ: Անձի սկեսուրը վերջինիս և նրա ամուսնու ընտանեկան կյանքը ապակայունացնող վեճեր է ստեղծում, նշում որ անձի ամուսինը չունի ՄԻԱՎ դրական կարգավիճակ, իսկ վերջինս այդպիսի կարգավիճակ է ձեռք բերել ամուսնական դավաճանության հետևանքով: Սկեսրոջ այսպիսի խտրական վերաբերմունքի հետևանքով պարբերական բնույթ են ստանում նաև շահառուի և նրա ամուսնու միջև վեճերը, որը խաթարում է նրանց ընտանեկան խաղաղ կյանքը և հոգեկան տառապանք է պատճառում Շահառուին:

Կազմակերպության սոցիալական աշխատողների կողմից Շահառուին տրամադրվել է խորհրդատվություն: Շահառուն հրաժարվել է իր նկատմամբ ընտանիքի անդամների կողմից դրսևորված խտրականության վերաբերյալ ահազանգել իրավապահներին և դրան տալ հետագա ընթացք՝ վախենալով ենթարկվել կրկնակի խտրականության:

Դեպք-15 Շահառուի ՄԻԱՎ կարգավիճակի մասին գիտեն ընտանիքի բոլոր անդամները, որի պատճառով վերջինիս նկատմամբ խտրական վերաբերմունք են ցուցաբերում Մասնավորապես, շահառուն սկզբնապես, մինչև մոր բնակարան տեղափոխվելը, ապրել է իրեն սեփականության իրավունքով պատկանող բնակարանում իր որդու հետ: Վերջինս, շահառուի ՄԻԱՎ կարգավիճակի մասին տեղեկանալուց ի վեր անընդհատ կշտամբել է նրան մեղադրելով ՄԻԱՎ-ի նկատմամբ դրական կարգավիճակ ունենալու համար: Մեղադրանքը պայմանավորված է եղել նաև նրանով, որ շահառուի որդին չի հաշտվել այն մտքի հետ, որ իր մայրը ինքնուրույն սեռական կյանքով է ապրել իր հոր մահից հետո: Չդիմանալով իր որդու ամենօրյա ճնշումներին՝ շահառուն տեղափոխվել է իր մոր բնակարան և ապրում է նրա հետ միասին: Սակայն նրա նկատմամբ խտրականություն է դրսևորվում նաև իր մոր կողմից: Վերջինս խուսափողական վերաբերմունք է ցուցաբերում, սահմանափակում է շփումները շահառուի հետ, իսկ շահառուի խնամքը կազմակերպելու ընթացքում օգտագործում է ռետիսե ձեռնոցներ:

Կազմակերպության սոցիալական աշխատողների կողմից Շահառուին տրամադրվել է խորհրդատվություն՝ առկա իրավիճակով պայմանավորված: Շահառուն հրաժարվել է իր նկատմամբ ընտանիքի անդամների կողմից դրսևորված խտրականության վերաբերյալ ահազանգել իրավապահներին և դրան տալ հետագա ընթացք՝ վախենալով ենթարկվել կրկնակի խտրականության:

Դեպք-16 Շահառուն խտրականության է ենթարկվել ամուսնու կողմից: Վերջինս, իմանալով շահառուի ՄԻԱՎ դրական կարգավիճակի մասին, նշել է, որ այլևս չի ցանկանում շահառուի հետ ապրել, քանի որ վախենում է, որ ինքն էլ կվարակվի: Շահառուի ամուսինը նրան ուղարկել է Հայաստան՝ նշելով, որ մինչև վերջնականապես բուժում չստանա, չի կարող վերադառնալ ՌԴ:

Շահառուի և նրա ամուսնու հետ իրականացվել է շարունակական աշխատանք, սակայն շահառուի ամուսինը հրաժարվել է նրա հետ որևէ առընչություն ունենալ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Թեև նախորդ տարվա համեմատ Կազմակերպության կողմից ՄԻԱՎ-ով ապրող անձանց նկատմամբ արձանագրված խտրականության դեպքերը նվազել են, սակայն իրավախախտումների բնույթը, համակարգային խնդիրների առկայությունն ու տարածվածությունը շարունակում է նույնը մնալ: Արձանագրված դեպքերի վերլուծությունից պարզ է դառնում, որ տարբերակված և անհարգալից վերաբերմունքի դրսևորման դեպքերի մեծամասնությունը կատարվել է բուժհաստատություններում: Մասնավորապես, ակնհայտ է, որ խտրականության են ենթարկում այն բուժաշխատողները, որոնք տեղեկացված չեն ՄԻԱՎ-ի, դրա փոխանցման ուղիների, հետևողականության կանխարգելման և բժշկական բազային գիտելիքներին ու հմտություններին մասին: Ինչի հետևանքով ավելի է խորանում կարծատիպային մթնոլորտն և բացասական վերաբերմունքը ՄԻԱՎ-ով ապրող անձանց նկատմամբ: Բացի այդ, առկա է ոլորտի իրավակարգավորումների, այդ թվում՝ աճական տվյալների պաշտպանության, բժշկական գաղտնիքի պահպանման, ինչպես նաև պացիենտների իրավունքների և բժշկի պարտականությունների վերաբերյալ իրազեկվածության պակաս: Ընդ որում, պետք է առանձնահատուկ նշել, որ ոչ միայն բժշկական հանրություն, այլև՝ իրավապահ մարմինների աշխատակիցների շրջանում առկա է բժշկական և օրենսդրական կարգավորումների ու դրանց տեղեկացվածության մակարդակի բարելավման կարիք:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ընդունել խտրականությունը կանխարգելող, ինչպես նաև արգելող՝ քաղաքացիական, վարչական և քրեական պատասխանատվություն սահմանող առանձին համապարփակ օրենսդրություն, որը կապահովի՝

ա) խտրականությունից պաշտպանված լինելու անձի իրավունքը նաև առողջական վիճակի հիմքով,

բ) մասնավոր կառույցների կամ անձանց կողմից խտրականության արգելքի արդյունավետ իրավակարգավորումներ,

գ) կնախատեսի հասարակական կազմակերպությունների իրավասուբյեկտությունը հանրային շահի պաշտպանության գործերով:

2. ՄԻԱՎ-ով ապրող անձանց նկատմամբ խտրականության դրսևորման դեպքերը նվազեցնելու և բացառելու նպատակով բուժաշխատողների համար իրականացնել շարունակական վերապատրաստումներ ՄԻԱՎ-ի, ՄԻԱՎ-ի փոխանցման, կանխարգելման, բուժման, ինչպես նաև պացիենտների իրավունքների

(մասնավորապես՝ խտրականությունից զերծ լինելու, գաղտնիության իրավունքներ) մասին:

3. Կատարելագործել առողջապահական հաստատություններում իրականացվող վերապատրաստումների ընթացքի և արդյունքների մշտադիտարկման ու բողոքարկման մեխանիզմները՝ հսկողական և վերահսկողական լիազորություններ հատկացնելով ոլորտային հասարակական կազմակերպություններին:

4. Բժշկական օգնության և սպասարկման ոլորտում գաղտնիության իրավունքի իրացման անհրաժեշտությամբ պայմանավորված՝ ապահովել բուժհաստատությունների հիվանդասենյակներում պացիենտներին մեկուսի և գաղտնի հետազոտելու, ինչպես նաև խորհրդատվություն տրամադրելու համար համապատասխան տեխնիկական և կազմակերպչական միջոցների իրականացումը, ինչպես նաև պարբերաբար և շարունակական վերապատրաստումներ իրականացնել բժշկական հաստատություններում՝ ՄԻԱՎ-ով ապրող անձանց գաղտնիության իրավունքի խախտման անթույլատրելիության մասին:

5. Հանրակրթական համապատասխան ուսումնական ծրագրերում կատարել փոփոխություններ՝ ընդգրկելով համապարփակ տեղեկատվություն խտրականության արգելքի սկզբունքի, դրա խախտման հետևանքների, ինչպես նաև իրավահավասարության և հանդուրժողականության վերաբերյալ:

6. Իրականացնել լայնամասշտաբ տեղեկատվական, հանրային իրազեկման աշխատանքներ (սոցիալական գովազդների, կրթական ծրագրերի, իրազեկման հաղորդումների և հասանելի այլ եղանակներով)՝ բացառելու համար հասարակության լայն շրջանակներում ՄԻԱՎ-ի, ՄԻԱՎ-ի փոխանցման, կանխարգելման, բուժման, ինչպես նաև ՄԻԱՎ-ով ապրող անձանց նկատմամբ առկա խտրական վերաբերմունքի դրսևորումները:

7. Վերանայել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ենթակայությամբ գործող սոցիալական ծառայության մարմինների աշխատողների վերապատրաստման ծրագրերը՝ դրանցում ընդգրկելով խտրականության արգելքի սկզբունքի, դրա պահպանման անհրաժեշտության, խախտման հետևանքների մասին համապարփակ տեղեկատվություն:

8. Կատարել համապատասխան փոփոխություններ ՀՀ քրեական օրենսգրքում՝ ՄԻԱՎ-ի փոխանցման հետ կապված կարգավորումներում՝ օրենսգիրքը համապատասխանեցնելով ՄԱԿ-ի ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի միացյալ հարցերի ծրագրի պահանջներին:

9. Քաղաքացիական հասարակության և ոլորտային փորձառություն ունեցող հասարակական կազմակերպությունների հետ համագործակցությամբ շարունակաբար կատարելագործել տեղեկատվական բնույթի աշխատանքների իրականացման որակը,

կազմակերպել դասընթացներ՝ վերարտադրողական առողջության ոլորտում կանանց հիմնարար իրավունքների կիրարկման վերաբերյալ ՀՀ բոլոր բուժհաստատություններում՝ բացառելու ՄԻԱՎ-ով ապրող կանանց նկատմամբ խտրականության ցանկացած դրսևորում:

10. Մշակել և ՀՀ կառավարություն ներկայացնել համապատասխան որոշման նախագիծ հղիության ընթացքում կանաց ՄԻԱՎ-ի վերաբերյալ պատրադիր երկու հետազոտությունները անցնելու նորմատիվ պահանջը իրացնելու կապակցությամբ՝ պատշաճ հսկողություն չիրականացրած բուժաշխատողների նկատմամբ իրավական ներգործության միջոցներ նախատեսելու մասին: